

# Հակոբ Հովհաննեսի ԶԱԼԹԻԿՅԱՆ

(Ծննդյան 120-ամյակի առթիվ)



Տաղանդաշատ ֆիզքիմիկոս Հակոբ Զալթիկյանը ծնվել է 1902 թ. Կարսում: 1922 թ. ընդունվել է Երևանի համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետի քիմիայի բաժինը: Միաժամանակ սովորել է նաև ԵՊՀ-ի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետում և 1927 թ. համալսարանն ավարտել է քիմիկոսի և ֆիզիկամաթեմատիկոսի որակաորումներով ու աշխատանքի անցել ԵՊՀ ֆիզքիմիայի ամբիոնում:

1930 թ. գործուղվել է Լեհինգրադ և Մոսկվա, որտեղ աշխատել է հայտնի ֆիզիկոս Մանդելշտամի մոտ: 1931 թ. գործուղվել է Գերմանիա (Մյունխեն) և մեծանուն գիտնական Ֆայանսի ղեկավարությամբ մեկ տարի զբաղվել ուժեղ էլեկտրոլիտների լուծույթների ջերմադինամիկայի ուսումնասիրությամբ: 1932 թ. Հ. Զալթիկյանը նշանակվել է նոր կազմակերպված Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոռեկտոր, ռեկտորի տեղակալ և միաժամանակ քիմիատեխնոլոգիական ֆակուլտետի ղեկան (1932-1934 թթ.):

Վերապատրաստվել է Մոսկվայի Կարպովի անվան քիմիայի ինստիտուտում և զբաղվել մոտ 100 տարի գիտական բանավեճի նյութ դարձած մետաղվակուում սահմանին պոտենցիալի թռիչքի հարցով: Ունենալով ճկուն միտք և ֆիզիկայից ու մաթեմատիկայից խոր գիտելիքներ՝ նա կարճ ժամանակում պարզաբանում է այդ հարցը, որի համար 1934 թ. երիտասարդ տաղանդավոր գիտնականին առանց ատենախոսության պաշտպանության ԽՍՀՄ ԲՈՂ-ի կողմից շնորհվել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1935-ական թթ. համագործակցելով իր ուսուցիչ պրոֆ. Ս. Ղամբարյանի հետ՝ կառուցվող կաուչուլի գործարանի համար կազմակերպել է գիտահետազոտական լաբորատորիա և 9 տարի զուգահեռաբար (աշխատելով հիմնականում ԵՊՀ-ում) զբաղվել ացետիլենի քիմիայի հարցերով:

1933 թ. նա պրոֆ. Լ. Ռոտինյանի հետ վերակազմավորել է ԵՊՀ ֆիզիկական քիմիայի ամբիոնը՝ այն դարձնելով բարձր մակարդակի ֆիզիկական և կոլորիդների քիմիայի ամբիոն, որը շարունակեց ղեկավարել պրոֆ. Ռոտինյանը մինչև 1938 թ., իսկ 1939 թ.-ից մինչև իր կյանքի վերջը՝ Հ. Զալթիկյանը:

Գիտական երկրորդ լուրջ ձեռքբերումը վերաբերում է ամին-բենզոլի պերօքսիդ համակարգում ընթացող ռեակցիաների ուսումնասիրությանը: Այնուհետև նա զարգացրեց այս ուղղությունը, որն ուներ և՛ գիտական, և՛ գործնական նշանակություն:

Գիտական ձեռքբերումներն այնքան նշանակալից էին, որ ԵՊՀ-ում առաջինը ստեղծվեց պոլիմերման գործընթացների կինետիկայի պրոբլեմային գիտահետազոտական լաբորատորիա, որը մինչև կյանքի վերջը ղեկավարել է պրոֆ. Հ. Զալթիկյանը:

Նա ուսումնասիրել է կուպրոկատալիտիկ ռեակցիաները ացետիլենային միացությունների մասնակցությամբ: Այս ուսումնասիրությունների արդյունքները ամփոփվել են «Կուպրոկատալիզ» մենագրությունում (1963 թ., Երևան), որը ԱՄՆ-ում թարգմանվել է անգլերեն՝ «Cooper Catalytic Reactions» (1966, Նյու Յորք):

Նշանակալից են պրոֆ. Հ. Զալթիկյանի ուսումնասիրությունները վինիլացետատի ստացման ռեակցիաների մեխանիզմների բացահայտման ուղղությամբ, որոնք ունեին կարևոր գործնական բնույթ: Այդ աշխատանքների արդյունքների հիման վրա 1946 թ. Մոսկվայում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, իսկ 1948 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանում պրոֆ. Հ. Զալթիկյանը հեղուկաֆազ ռեակցիաների ֆիզքիմիայի և ֆիզիկական օրգանական քիմիայի դպրոցի հիմնադիրն ու զարգացնողն է: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների, այդ թվում՝ «Ֆիզիկական քիմիա» (1972, 1975, Երևան) և «Ֆիզիկական քիմիայի պրակտիկում» (1969, Երևան) բուհական դասագրքերի:

Պրոֆ. Հ. Զալթիկյանը եղել է Դ. Մենդելեևի անվան համամիութենական քիմիական ընկերության ՀՀ բաժանմունքի նախագահ, 1967 թ.-ից մինչև կյանքի վերջը՝ ԵՊՀ գիտական տեղեկագրի գլխավոր խմբագիր: 1961 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1961 թ. նրան շնորհվել է ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, 1962 թ. պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Վախճանվել է 1972 թվականին:

Հակոբ Զալթիկյանը միջազգային մակարդակի քիմիկոս-գիտնական էր և մեծ ժառանգություն է թողել քիմիայի ուսումնագիտական և կիրառական բնագավառներում, պայծառ հիշատակ՝ գիտական հանրության շրջանում:

**Սերգեյ ԳՐԻԳՈՐՅԱՆ  
Ռոմիկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Քիմիական գիտությունների  
դոկտորներ,  
պրոֆեսորներ**